

ԿՐԿԻՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Օրերս հայտնի է դարձել, որ Աղրբեջանի ժողովրդական ճակատի որոշմամբ սւահմանակից հանրապետությունում ժայռարարվել է տաւանօրիա գործադուզ: Ո՞ւմ է այն ուղղությած, ի՞նչ են ուզում մեր «Հայտերնացիոնալիստ» Բարեւ մնաները: Ինչպիսին էլ լինեն այս հարցերի պատասխուսները, չի կարելի շտեսնել միաև զամայն անսքող մի բան, գործադուզը մեր հանրապետության համար նշանակում է մի նոր շրջափակում: Եվ Ընդհանուր այն պահին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում նորից նոր ուժով հառնում է և եռային Ղարաբաղի պրոբլեմ ին անհապաղ քննարկման պահանջը և ինչ-որ հեռանկար է ուրվագծվում: Ինչո՞ւ: Շատ պարզ. պետք է դրա համար համապատասխան ֆոն ստեղծել, որից հիշեցնել տիսյահոչակ

աանկանխատեսելի հետևանք-ների» մասին, ուժ ցուց տալ:

Ինչպես և պետք էր սպասել, Աղրբեջանի ժողովրդական ճակատի «ինտերնացիոնալիստների» խոսքն արդեն գործ է դառնում, և դա, բնականաբար, առաջինն զգացին Անդրեևիկապետու Երևանի բաժանմունքն ու սահմանամերձ շրջանները: «Ղափան—Երևան» և «Բաքու—Երևան» զնացքները ժամանման վայր են հասել 8—10 ժամ ուշացումով, դադարեցվել է նախիջևանի ԽԽՍՀ-ով Հայաստան և Վըրաստան մեկնող զնացքների երթենեկությունը մի շատ «տըրամաբանական» պատճառաբանությամբ. «Մեզ մոտ գործադուզ է»: Մանոք ձեռագիր. ոչ թե շրջափակում, այլ... գործադուզ: Միայն թե այնպիսի «զործադուզ», որի ժամանակ անդուզ գործում է խառնամ-

բոխը, նորից զնացքների ջարդոց, քարեկոծումներ, մարդկանց ահարենկումներ, վիրավորանքներ: Անա զերված և մի կերպ ազատված զնացքներից մեկի ուղևորի խոսքը. «Մեզ հայնոյում էին, սպառնում հաշվեհարդար տեսնեզ: Ամենասարսափելին կատարվեց Նորաշեն կայարանում, որտեղ հավաքվել էր շուրջ 2 հազար վայրենացած բազմություն, որը քարեկոծեց զնացքը:

Դե ինչ, պատմությունը շարունակում է: Ասենք, այն ե՞րբ էր ավարտվել: Կարելի էր ավարտված համարել այն պատմությունը, որը որևէ զնահատականի չէր արժանացել: Եվ նաև դա չէ՝ այն ավերիչ քամին, որ բարձրացրեց Աղրբեջանի ժողովրդական ճակատի հրանրած ազգայնամոլական զործողությունների այս նոր ալիքը: Մինչև ե՞րբ: